

ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՐՄԱՏԱՎՈՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐՈՆ ԱՊԻՅԱՆ

Արդի ժամանակաշրջանում գիտատեխնիկական առաջադիմության գլխավոր ֆունկցիան տնտեսական է, քանի որ այն դարձել է արտադրության արդյունավետության բարձրացման ամենակարևոր խթանիչը: Գիտատեխնիկական առաջադիմության դերի բարձրացումը պահանջում է սոցիալիստական էկոնոմիկայում լայնորեն կիրառել տնտեսական հարաբերությունների կադմակերպման պայմանագրային իրավական ձևերը: Տնտեսական պայմանագրային իրավական հարաբերությունները նորություն չեն և վերջին տարիներում բավական խոր ուսումնասիրվել են¹: Սակայն տնտեսական պայմանագիր հասկացությունը հիմնականում բնութագրվել է քաղաքացիական իրավունքի համար ավանդական հատկանիշներով, որոնք բխում են քաղաքացիական օրենսդրությամբ ամրապնդված պարտավորություններից:

Սակայն փորձը ցույց տվեց, որ տնտեսական պայմանագրի էությունը հնարավոր չէ խոր ու բազմակողմանի բացահայտել քաղաքացիական յուրացման շրջանակներում: Ներկայումս այդ հասկացությունը բնութագրվում է սոցիալիստական կազմակերպությունների տնտեսական գործունեության հետ կապված հատկանիշներով, տնտեսավարմամբ՝ դիտական հիմնարկների և արդյունաբերական ձեռնարկությունների միջև կնքվող պայմանագրերից բխող պարտավորության հարաբերությունների իրավաբանական բովանդակությամբ:

Ձեռնարկությունների ու կազմակերպությունների հետ տնտեսական պայմանագրերի կնքումը առավել բնորոշ է ճյուղային գիտահետազոտական ինստիտուտներին: Դա, իհարկե, պատահական չէ, քանի որ ճյուղային գիտական հիմնարկներն ավելի մոտ են կանգնած արտադրությանը, անմիջականորեն մասնակցում են նոր արտադրատեսակների, մեքենաների, ապարատների արտադրության յուրացմանը և նոր տեխնոլոգիական պրոցեսների արմատավորմանը: Այդ պայմանագրերի միջոցով ճյուղային գիտության զարգացման համար ստացվում են զգալի դրամական միջոցներ, որոնք ճյուղային գիտական հիմնարկները ծախսում են իրենց առաջնահերթ կարիքների հա-

¹ Я. Б а р а н, Новое в регулировании договоров на проведение научно-исследовательских опытно-конструкторских и технологических работ («Советская юстиция», 1970, № 2, стр. 25); «Организационно-правовые вопросы руководства наукой в СССР», М., 1973, стр. 332; А. М. Г а р и б я н, Авторское право на произведения науки, Ереван, 1975, стр. 29 — 49; А. Ю. К у к р у с, Договоры о проведении научно-исследовательских работ в вузах («Советское государство и право», 1975, № 10, стр. 67).

մարտի 4-յանը ցույց տվեց, որ անտեսական պայմանագրերն առավել լիովին են համապատասխանում ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներին, նպատակահարմար են և օգտակար:

Ճյուղային դիտական հիմնարկների (մյուս հետազոտական կազմակերպությունների հետ մեկտեղ) և արդյունաբերական ձեռնարկությունների միջև ուղղակի տնտեսական պայմանագրերի ծավալների ընդլայնումը ապացուցում է, որ ոչ հեռու ապագայում դրանք առաջատար տեղ են գրավելու տնտեսական շրջանառության մեջ: Հետազոտությունների ու մշակումների կատարման հետ կապված պարտավորության իրավահարաբերությունները ծագում են գիտահետազոտական, փորձնա-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման, նախագծային ու հետազոտական աշխատանքների և դիտաստեխնիկական մշակումների հանձնման վերաբերյալ պայմանագրերից: Ույս պայմանագրերում պարտավորության օբյեկտներ են գիտատեխնիկական դործունեության առարկայացված արդյունքները, այսինքն՝ փաստաթղթերը (հետազոտական, կոնստրուկտորական, տեխնոլոգիական, նախագծային, նախահաշիվային):

Գիտական հիմնարկների (ճյուղային) և արդյունաբերական ձեռնարկությունների միջև կնքված տնտեսական պայմանագրերի ձևավորման ու կատարման կարգի նորմատիվային ակտերն են «գիտահետազոտական, փորձնական կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման տնտեսական պայմանագրերի կնքման և մինիստրության ներսում պատվերների հանձնման կարգի մասին տիպային կանոնադրությունը» (որը ՍՍՀՄ Մինիստրների սովետի գիտության ու տեխնիկայի պետական կոմիտեն հաստատել է 1969 թ. օգոստոսի 5-ին)², «Ավարտուն գիտատեխնիկական մշակումների ընդունման ու գնահատման կարգի մասին ընդհանուր կանոնադրությունը»³, «Նախագծային և հետազոտական աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագրերի մասին կանոնները» (1959 թ. մայիսի 25): Միաժամանակ իրավական կարգավորման աղբյուրներ են առաջինի հավելվածները՝ տիպային պայմանագրերը, պատվերը և ճյուղում պայմանագրի կնքմանը վերաբերող մի քանի այլ փաստաթղթեր⁴:

Հետազոտությունները պրոբլեմների բազմակողմանիության պատճառով ստորև քննվելու են միայն երկու տեսակի տնտեսական պայմանագրեր. ա) իրավական, փորձնական կոնստրուկտորական ու տեխնոլոգիական, բ) նախագծային ու հետազոտական աշխատանքների կատարման:

Հանրապետության արդյունաբերության, տրանսպորտի և այլ ճյուղերի՝ պետական բյուջեից կենտրոնացված կարգով ֆինանսավորվող գիտահետազոտական և կոնստրուկտորական մի շարք կազմակերպություններ փոխադրվել են տնտեսաշարի և նրանց հարաբերությունները պատվիրատուների հետ ձևավորվել են 1961 թ. պայմանագրերով: Տնտեսական պայմանագիր կնքելու

² «Законодательство о капитальном строительстве», вып. I, М., 1969, стр. 583 — 594.

³ Общее положение о порядке приемки и оценки законченных научно-технических разработок утверждено постановлением Государственного комитета Совета Министров СССР по науке и технике 18 августа 1969 г., № 370.

⁴ «Законодательство о капитальном строительстве в СССР», т. I, М., 1961, стр. 424—437.

իրավունք էր վերապահված նաև հանրապետության ակադեմիական հիմնարկներին, որոնք պատվիրատուներից ստացված միջոցներով պետք է ծածկեին հետազոտական ծախսերի առնվազն 5%-ը: Սակայն վերջիններս իրավասու չեն պատվիրատուների հետ պայմանագիր կնքելով գիտահետազոտական և փորձնական ստորակտորական աշխատանքներ կատարել դրանց համար ժողովրդատնտեսական պլանով նախատեսված ծախսերի ծավալից ավելի: Մինչդեռ տնտեսաշարժարկային ճյուղային կազմակերպությունները կարող են իրենց հետազոտությունների մի մասը կատարել պետական բյուջեի միջոցների հաշվին, եթե ադաշխատանքները տեսական բնույթի են և ունեն համապետական նշանակություն: Հաշվի առնելով ժողովրդական տնտեսության այս կամ այն ճյուղում գիտության ու տեխնիկայի զարգացման կոնկրետ պայմանները՝ աշխատանքների ֆինանսավորումը (կենտրոնացված և չկենտրոնացված աղբյուրներից) պետք է կատարվի տարբեր մակարդակներով: Սահմանված կարգի համաձայն, պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման առավելագույն բաժինը պետք է կադմի բոլոր ծախսերի 17—70%-ը, որը որոշվում է կատարվող հետազոտությունների ու մշակումների առանձնահատկություններով: Հիմնական գիտատեխնիկական պրոբլեմների լուծման հետ կապված՝ կոորդինացիոն պլաններով նախատեսված գիտահետազոտական, ինչպես նաև ֆունդամենտալ ու որոնողական բնույթի և շինարարության բնագավառի հետազոտությունները ֆինանսավորվում են պետական բյուջեի հաշվին: Խառը ֆինանսավորման սկզբունքը կիրառվում է թեմատիկ հատվածով, երբ այս կամ այն թեմայի համար նախատեսվում են ֆինանսավորման մի քանի աղբյուրներ:

Պայմանագրային կապերի կառուցվածքը որոշվում է գիտատեխնիկական կազմակերպությունների մասնագիտացմամբ: Ըստ տիպային կանոնադրության պատվիրատուները գիտական աշխատանքների արդյունքներն արտադրության մեջ ներդնող և դրանք վարձատրելու համար պլանով միջոցներ ստացող ձեռնարկություններն են: Հենց նրանք էլ առաջադրանքներ են տալիս ու պահանջներ ներկայացնում՝ ելնելով արդյունաբերության համապատասխան ճյուղի զարգացման և արտադրության մեջ նոր տեխնիկայի արմատավորման պլաններից: Պայմանագրային աշխատանքների հիմնական կատարողները համապատասխան թեքումով գիտատեխնիկական կազմակերպություններն են, որոնք իրենց պլանում ունեն թեմատիկ առաջադրանքներ և ապահովված են անհրաժեշտ նյութական ռեսուրսներով: Երբեմն որպես պատվիրատու հանդես են գալիս պետական վարչական մարմինները, որոնք աշխատանքները հանձնարարում են իրենց իրավասությանը ենթակա գիտատեխնիկական կազմակերպություններին: Այդ դեպքում ձևակերպվում է գիտահետազոտական պատվեր, որը համազոր է պայմանագրին:

Ճյուղային գիտական հիմնարկի և արդյունաբերական ձեռնարկության միջև ուղղակի տնտեսական պայմանագրի կնքման հիմնական պայմանը նրանց վերադաս մարմինների ցուցումն է: Սակայն պայմանագրեր կարող են կնքվել նաև կողմերի նախաձեռնությամբ: Ըստ տիպային կանոնադրության, այդ պայմանագրերի նախագծերը նախապատրաստում են երկու կողմերը՝ պատվիրատուն և կատարողը:

Պայմանագրի նախագծի նախապատրաստման ընթացքում կատարողը պատվիրատուի հետ համաձայնեցնելով, առաջին հերթին որոշում է հետազոտության թեմատիկան, աշխատանքների կատարման ժամկետը և նախնական

արժեքը: Այդպիսով, հատկապես է աշխատանքի ընդհանուր ծրագիրը: Երկրորդ փուլում կողմերը փոխադարձ համաձայնությամբ մշակում են ընդհանուր նպատակից՝ աշխատանքի կատարումից բխող հարցերը, որոնք պայմանագրային աշխատանքների ժամանակին և արդյունավետ կատարման համար կարևոր նշանակություն ունեցող զանազան գիտական, տնտեսական ու տեխնիկական պահանջներ են: Օրենսդրությունը հատուկ նշանակություն է տալիս ապագա աշխատանքների ֆինանսավորման ու նյութատեխնիկական ապահովման աղբյուրները որոշելու հարցը պատվիրատուի և կատարողի միջև մանրամասն համաձայնեցնելուն: Կարևոր է նաև պայմանագրի մեջ աշխատանքների կատարման ստույգ ժամկետների, հիմնական փուլերի ճիշտ ու հիմնավորված նշումը, քանի որ այդպիսի պայմանագրերը հիմնականում երկարաժամկետ են լինում: Աշխատանքը ժամանակին կատարելը պատվերն ստացողի գլխավոր պարտականությունն է: Պատվիրատուի՝ տիպային կանոնադրությամբ և տիպային պայմանագրով նախատեսված հիմնական իրավունքներից մեկն էլ աշխատանքների ընթացքին հետևելը և որակը ստուգելն է:

Տիպային կանոնադրության մի հատուկ բաժին նվիրված է աշխատանքների արժեքին և դրանց վճարման կարգին: Գիտահետազոտական, փորձնական ստորակտորական և տեխնոլոգիական մշակումների ընդհանուր արժեքը որոշվում է նախահաշվային արժեքներով, որոնցում նախատեսվում են ինչպես ուղղակի, այնպես էլ վերադիր ծախսերը: Նախահաշվային հաշվարկները կցվում են պայմանագրին: Նախահաշվային հաշվարկի մեջ մտցվում են մշակման հետ կապված բոլոր ծախսերը (սկսած անձնակազմի աշխատավարձից մինչև գործուղման և պայմանագրային ծախսերը):

Պայմանագրի մյուս կարևոր կետը կատարված աշխատանքի դիմաց վճարման կարգի ճիշտ որոշումն է, մասնավորապես, գիտահետազոտական աշխատանքների համար կանխավճարների չափերի ու ժամկետների սահմանումը: Ի տարբերություն մյուս պայմանագրերի, այստեղ նախատեսվում է կանխավճար, որի մոտ մասն ժամկետը հաշվվում է պայմանագրի ստորագրման օրվանից: Ըստ որում, կանխավճարը չպետք է գերազանցի աշխատանքի ընդհանուր արժեքի 25%-ից: Հաշվարկման այլ կարգ է սահմանվում այն դեպքում, երբ աշխատանքը կատարվելու է մեկ տարուց ավելի ժամկետում: Այդ դեպքում կանխավճարի չափը պետք է հաշվարկվի տվյալ տարվա նախահաշվային արժեքից: Աշխատանքի առանձին փուլերի պատրաստության համեմատ կատարվում են միջանկյալ վճարումներ: Ըստ պայմանագրի, հաշիվը վերջնականապես պետք է փակվի ամբողջ աշխատանքի հանձնում-ընդունումից հետո, իսկ եթե անհրաժեշտ է լինում որոշակի լրացուցիչ մշակումներ կատարել, ապա հաշիվը փակվում է աշխատանքը վերջնականապես ավարտելուց հետո:

Ուշագրավ է պայմանագրի փոփոխման, լրացման և չեղյալ հայտարարելու կարգը: Դրանք հիմնականում պայմանավորված են օբյեկտի առանձնահատկություններով: Սա փաստորեն նշանակում է, որ գիտատեխնիկական աշխատանքների ստեղծագործական բնույթի հետ կապված գույքային ռիսկի է դիմում պատվիրատուն, որն ամեն դեպքում կատարողին վճարում է նրա բոլոր փաստացի ծախսերը: Առայժմ պատվիրատուի համար, որը ստանձնում է լրացուցիչ կամ անարտադրողական ծախսեր, անհրաժեշտ իրավական երաշ-

խիքներ չկան, թեև մասնագիտական գրականության մեջ վաղուց առաջարկվել է այդ ծախսերը դնել կառավարողի վրա և հատուցել «գիտական ու տեխնիկական կազմակերպությունների ռեզերվային ֆոնդերի միջոցներից, որոնց ստեղծման անհրաժեշտությունը օբյեկտիվորեն բխում է գիտական աշխատանքի անորոշությունից և հավանականությունից»⁵:

Հաճախ, աշխատանքի ընդունման ժամանակ, պատվիրատուն նկատում է, որ առանձին պրոբլեմներ լրացուցիչ մշակման ու փոփոխման կարիք ունեն, ինչ պատճառով էլ պատվերի կատարումը ձգձգելու կամ աշխատանքը ժամանակին ընդունելու համար, դուրսային սանկցիաների հետ միասին, տիպային պայմանագրով նախատեսված է, որ աշխատանքի անհրաժեշտ որակը ապահովելու համար կատարողը պարտավոր է պատվիրատուի պահանջով, ամենաանհրաժեշտ ճամկետում, անհրաժեշտ ուղղումներ մտցնել տեխնիկական փաստաթղթերի մեջ, շտկել դրանցում տեղ գտած թերությունները, եթե մեղավորը կատարողն է՝ նման դեպքում կնքվում է լրացուցիչ համաձայնագիր՝ մանրամասն նշելով մշակումների բովանդակությունն ու կատարման ժամկետները: Լրացուցիչ համաձայնագիրը կողմերի համար պարտադիր է դառնում վերադասի կողմից՝ հաստատվելուց հետո: Թերությունները նշված ժամկետում չվերացնելու դեպքում կատարողը տույժ է վճարում ուղղման աշխատանքի արժեքի 4%-ի չափով, ինչպես նաև հատուցում է պատվիրատուի կրած փաստացի վնասները: Կոնստրուկտորական աշխատանքների որակի նկատմամբ պայմանագրային պահանջները վերաբերում են նաև կոնստրուկտորական կազմակերպության հետ կնքված պայմանագրով գործարանի կողմից նմուշի պատրաստման ընթացքում հայտնաբերվող թերություններին:

Օրենսդրության համաձայն (մասնավորապես քաղաքացիական), փորձարկողի փաստացի ծախսերը հատուցում է պատվիրատուն, եթե պայմանագիրը չեղյալ է հայտարարվել վերադաս կազմակերպության ցուցումով: Նման դեպքերում կատարողը պատվիրատուին գրավոր հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքի մասին, իսկ կատարողը պայմանագրի չեղյալ հայտարարման հետ կապված ծախսերը հատուցում է այն դեպքում, եթե դա տեղի է ունեցել իր մեղքով:

Վերջին տարիներս մեծ աշխատանք է կատարվել տնտեսական պայմանագրերի գնի՝ գիտատեխնիկական կազմակերպության աշխատանքի կարելիությունները խթանելի, կատարելագործման ուղղությամբ: Գիտատեխնիկական կազմակերպությունների ղեկավարներն այժմ իրավունք ունեն պայմանագրով նախատեսված ծախսերի շահույթի 75%-ն օգտագործել (բյուջեով նախատեսված հատկացումներից դատ) նյութատեխնիկական բաղադրի ընդլայնման համար:

Տնտեսական պայմանագրի մեկ այլ տեսակն է նախագծային և հետազոտական աշխատանքների կատարման համար կնքվող պայմանագիրը, որը տարածվեց 1959 թ. հետո, երբ նախագծային կազմակերպությունները փոխադրվեցին տնտեսաշրջակայի և նրանց փոխհարաբերությունները պատվիրատուների հետ կառուցվեցին պայմանագրային հիմունքներով⁶:

⁵ «Научно-технический прогресс и хозяйственная реформа», М., 1969, стр. 13.

⁶ В. А. Рассудовский, Договор на выполнение проектных и изыскательских работ в капитальном строительстве, М., 1963.

Նախագծման բնագավառի պարտավորությունների իրավահարաբերություններն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են հենց նախագծային հետազոտական գործունեության բնույթով, նախագծման՝ որպես կապիտալ շինարարության կարևոր փուլի, բնորոշ գծերով: Դրանք բխում են նաև նրանից, որ այդ պարտավորությունների օբյեկտը առանձնահատուկ է՝ նախագծային-նախահաշվային փաստաթղթերը շինարարական ու մոնտաժային աշխատանքների պլանային նորմատիվային հիմքն են կազմում:

Նախագծման բնագավառի պարտավորությունների առանձնահատկությունների մի մասն էլ բացատրվում է նրանով, որ հիշյալ աշխատանքները հիմնականում ֆինանսավորվում են կապիտալ ներդրումների պլանով, ինչպես նաև այն բանով, որ նախագծային-նախահաշվային փաստաթղթեր պատվիրողներին հատկացվող միջոցները բյուջե են վերադարձվում ՍՍՀՄ շինբանկին՝ նախագծային կազմակերպությունները ֆինանսավորող հիմնարկների միջոցով, որոնց տրամադրության սակ են մնում պլանային կուտակումները՝ սահմանված նորմատիվներով: Այս առանձնահատկություններից ելնելով, իրավաբանական գրականության մեջ նախագծային և հետախուզական աշխատանքների կատարման պայմանագիրը բնութագրվում է որպես շինարարության մեջ պայմանագրային հարաբերությունների կառուցվածքային տարր ու դիտվում է գիտատեխնիկական առաջադիմության շրջանակներից դուրս: Իհարկե, չի կարելի հաշվի չառնել նաև նախագծային կազմակերպությունների տնտեսական ու կազմակերպական առանձնահատկությունները, որոնց գործունեության նպատակն է շինարարությունը և արտադրողական կարողությունների շահագործումն ապահովել նախագծային-նախահաշվային փաստաթղթերի համաձայն: Սակայն նախագծումը «գիտություն-նախագծում-արտադրություն» շղթայի օղակը հանդիսանալով հանդերձ՝ արտադրական գործունեության հետ չի միաձուլվում: Արդյունաբերական շինարարության օբյեկտների տեխնոլոգիական մասը նախագծող ինստիտուտները մտնում են ձյուղային գիտատեխնիկական կազմակերպությունների միասնական համակարգ: Ինչ, իսկ նախագծային աշխատանքների պլանները՝ համապատասխան ձյուղի գիտատեխնիկական զարգացման պլանների միասնական համակարգի մեջ: Նրանց գործունեությունը հաճախ խարսխվում է սեփական հետախուզական և փորձարարական հիմքի վրա:

Նախագծման գործում պարտավորական հարաբերությունների սուբյեկտներ են այն ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնց կապիտալ ներդրումներ են հատկացված հաստատված տիտղոսացուցականներով: Որպես զխավոր նախագծող, սովորաբար, հանդես է գալիս որևէ տեխնոլոգիական ինստիտուտ, որը ենթակապալային հիմունքներով այդ աշխատանքի մեջ է ներգրավում մասնագիտացված կազմակերպությունների: Ընդհանուր, նորմատիվային բնույթի նախագծային փաստաթղթերի պատվիրատու կարող են լինել կառավարման մարմինները: Նրանք իրենց իրավասությանը ենթակա նախագծային կազմակերպություններին տալիս են կարգագիր-պատվերներ, որոնք իրավական բնույթով նման են գիտահետազոտական ու կոնստրուկտորական աշխատանքների կատարման ներդրատեսչային պատվերներին:

Իր առանձնահատկություններն ունի նաև նախագծման պլանի ու պայմանագրի հարաբերակցությունը: Նախագծային ու հետախուզական աշխա-

տանքների պլանները պատկանում են կապիտալ աշխատանքների և կապիտալ ներդրումների կենտրոնացված պետական պլանավորման բնագավառին, ուստի պայմանագրի պայմանավորվածությունը պլանով՝ այստեղ ավելի «խիստ» է, քան հետազոտությունների և կոնստրուկտորական մշակումների պայմանագրերում: Գործնականորեն դեռևս լուծված չէ նախագծման պլանները նախագծային կազմակերպությունների հնարավորությունների, դրանց արտադրական ծրագրերի ձևավորման հետ սերտորեն շաղկապելու խնդիրը (պատվերները նախապես ստանալու և պայմանագրերը նախապես ձևակերպելու հիման վրա): Աշխատանքը կատարողի գլխավոր պարտականությունն է նախագծման ժամանակ ընտրել առավել առաջադիմական, խնայողաբեր ու տեխնոլոգիական հաջող լուծումներ: Նախագծերն ու նախահաշիվները պետք է լինեն լրիվ և կատարվեն ռացիոնալ ծավալով: Նախագծման պրոցեսի հետանիջականորեն շաղկապված պրոֆիլային բնույթի աշխատանքներից բացի, նախագծային ինստիտուտները կատարում են շինարարության նկատմամբ հսկողի (տեխնիկական ու հեղինակային) դեր և տեխնիկական օգնություն են ցույց տալիս գործարկման-կարգաբերման աշխատանքներում:

Նախագծման մեջ գնագոյացման կարգը էապես տարբերվում է հետազոտական և կոնստրուկտորական աշխատանքների գնագոյացումից: Առաջինում աշխատանքների արժեքը հաշվարկվում է գնացուցակով, ուստի և հաշվի են առնվում ոչ միայն անհատական, այլև հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերը: Այստեղից ծագում է մի այլ պրոբլեմ, այն, որ նախագծողները դեռևս հնարավորություն ունեն արհեստականորեն բարձրացնելու կատարվող աշխատանքների արժեքը: Բացի այդ, նախագծի մեջ ներկայումս հաշվի չի առնվում նախագծային լուծումների արդյունավետության աստիճանը: Ուստի, տնտեսագետների խնդիրն է՝ մշակել գործի որակը նկատի ունեցող նախագծման տնտեսական արդյունավետության ցուցանիշներ:

Նախագծային և հետախուզական աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագրերի մասին կանոնների համաձայն, գույքային սանկցիաներ են նախատեսվում նախագծողի կողմից աշխատանքներն ուշացվելու և պատվիրատուի կողմից ելակետային սվյալները ներկայացնելու ժամկետը ձգձգելու համար: Նախագծային աշխատանքների պատշաճ որակի համար նյութական պատասխանատվություն է սահմանված ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1967 թ. հոկտեմբերի 27-ի № 988 որոշմամբ⁷: Գույքային պատասխանատվության պայմանները նման են հետազոտական և կոնստրուկտորական աշխատանքներին վերաբերող պայմաններին: Նախագծային կազմակերպությունները պարտավոր են իրենց ուժերով և իրենց հաշվին վերացնել նախագծային փաստաթղթերի թերությունները, տուգանք վճարել այդ թերությունները պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետին չվերացնելու համար: Նրանցից կարող են զանձվել նախագծային փաստաթղթերի ցածր որակի պատճառով առաջացող վնասները՝ բայց համապատասխան օբյեկտի նախագծման պայմանագրային արժեքի սահմաններում:

Տնտեսական պայմանագրերի գոյություն ունեցող տեսակների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հատուկ պայմանագրեր են և ունեն մի շարք

⁷ Ю. Г. Басин, Материальная ответственность предприятий и организаций за невыполнение заданий и обязательств (комментарий), М., 1969, стр. 77—80.

առանձնահատկություններ, որոնք բացատրվում են այդ պայմանագրերի օբյեկտների յուրատեսակությամբ, բազմապլանայնությամբ ու անորոշակիության գործոնի առկայությամբ: Չնայած գիտության ու տեխնիկայի ոլորտում տնտեսաշվարկի շրջանակների սահմանափակվածությանը և հետազոտական հիմնարկների ոչ լրիվ օպերատիվ տնտեսական ինքնուրույնությանը, որոնք խանգարում են նյութական շահագրգռվածության և գույքային պատասխանատվության մեխանիզմի լրիվ օգտագործմանը, ֆինանսավորման և հետազոտական աշխատանքների ու մշակումների կատարման պայմանագրային սիստեմը հնարավորություն է տալիս գիտությունը մոտեցնել արտադրությանը, հայտնաբերել կազմակերպական այն օղակը, որն առավել շահագրգռված է հետազոտությունների արդյունքների արտադրական օգտագործմամբ, գիտատեխնիկական կազմակերպությունների գործունեությունն ուղղել առաջնահերթ և արտադրությանն անհրաժեշտ մշակումներին: Կարևոր կազմակերպական խնդիրներ լուծելուց բացի, պայմանագիրը նաև պատվիրատուների ու պատվերները կատարողների շահերի վրա ազդելու միջոց է: Այստեղ խոսքը միայն գույքային սանկցիաների մասին չէ, որոնք ապահովում են պայմանագրային պարտավորությունների կատարումը: Պատվիրատուներից ստացվող միջոցները դառնում են գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման և գիտության ոլորտի աշխատողների նյութական խթանման ու խրախուսման ֆոնդերի ձևավորման աղբյուր:

ОСОБЕННОСТИ ДОГОВОРОВ ПО СОЗДАНИЮ И ВНЕДРЕНИЮ НОВОЙ ТЕХНИКИ

НЕРОН АПИЯН

Р е з ю м е

В современный период научно-технический прогресс стал первостепенным рычагом повышения эффективности производства, важнейшим его стимулятором. Возрастание его роли требует широкого использования в социалистической экономике договорно-правовых форм организаций хозяйственных отношений. Будучи важной формой укрепления связи науки с производством, хозяйственные договоры являются особыми договорами, которые наряду с общими чертами, присущими всем договорам, обладают целым рядом специфических особенностей, обусловленных характером уникальности их объекта, его многоплановостью, связью с фактором неопределенности.